ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

23/02/2022 - 10/03/2022

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 46 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 46 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

38 կողմ

0 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

15/03/2022

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:22:43	Պայմանագրի 3.2.կետը շարադրել հետեյալ խմագրությամբ «Վճարումը կատարվում է մինչև սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ամբողջ ծավալի մատուցումը՝ կատարման ամսվան հաջորդող ամսի 15-ը՝ կողմերի միջև համաձայնեցված կարգով: Ծառայությունների մատուցման ծավալի ամբողջականությունը կազմում է սույն պայմանագրով նախատեսված ամսական կտրվածքով ծառայությունների մատուցումը՝ ըստ անհրաժեշտության:»	Հետագա քննարկումների արդյունքում կետը հանվել է, նախագծում սահմանվել է վճարման այլ մեխանիզմ:	
2	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա	Պայմանագրի 3.1. կետում, նշել, թե արդյոք վճարը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը եւ այլ վճարները:	Հետագա քննարկումների արդյունքում կետը հանվել է, նախագծում սահմանվել է վճարման այլ մեխանիզմ:	

	10.03.2022 20:22:24			
3	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:22:15	Կարգի 34-րդ կետի տասնմեկերորդ ենթակետը շարադրել հետեյալ խմբագրությամբ «այլ անձանց անձնական օգնականի դերը համատեղությամբ ստանձնելու ցանկության դեպքում ստանալ հաշմանդամություն ունեցող անձի համաձայնությունը, եթե Պայմանագրով նախատեսված է այդ համաձայնություն ստանալու պարտադիրության պայմանի վերաբերյալ նշում:»	Այլ առաջարկի հիման վրա կետը հանվել է:	
4	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:10:33	Կարգի 34-րդ հոդվածի երրորդ ենթակետը շարադրել հետեյալ խմբագրությամբ «անձնական օգնականի ծառայության մեջ ներառվող գործողությունները և դրանց կատարման նախընտրելի ձևերը կատարել սույն Կարգի 8-րդ կետով սահմանված կարգով:»	Առաջարկը չի ընդունվել: 34-րդ հոդվածի երրորդ ենթակետով թվարկվում են անձնական օգնականի պարտավորությունները, այլ ոչ թե ծառայություն տրամադրելու կարգը:	
5	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:10:18	Կարգի 34 -րդ կետի երկրորդ ենթակետը շարադրել հետեյալ խմբագրությամբ. « հարգանքով և հոգատարությամբ վերաբերվել հաշմանդամություն ունեցող անձին, նրա գույքին և նրա կայացրած որոշումներին,»	Առաջարկը չի ընդունվել:	
6	Ներառական իրավական	Կարգի 34-րդ կետի առաջին ենթակետը շարադրել հետեյալ խմբագրությամբ.	Առաջարկը չի ընդունվել:	

	բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:10:07	«բարեխղճորեն եւ ամբողջ ծավալով կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները,»		
7	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:09:47	Կարգի 33-րդ կետի հինգերորդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «պայմանագրով նախատեսված ժամկետում և սահմանված չափով վճարել անձնական օգնականի ծառայության համար:»	Հետագա քննարկումների արդյունքում կետը հանվել է, նախագծով սահմանվել է վճարման այլ մեխանիզմ:	
8	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:09:11	Կարգի 33-րդ կետի առաջին ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Ներկայացնել անձնական օգնականի ծառայության տրամադրման համար անհրաժեշտ և հավաստի իրեն հայտնի տվյալներ,»	Առաջարկը չի ընդունվել:	
9	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:08:59	Կարգի 31-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Պայմանագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է անկախ կյանքի կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից՝	Առաջարկը չի ընդունվել: Վերահսկողական ծառայությունների լիազորությունները սահմանվում են օրենքով:	

		աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից սահմանված կարգով: Անձնական օգնականի ծառայությունների տրամադրման որակի նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունները օրենքով չարգելված կարգով եւ միջոցներով:»		
10	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:08:37	Կարգի 25-րդ կետը հանել, քանի որ անձնական օգնականի ընտրության կարգը սահմանված է Կարգի 7-րդ կետով:	Առաջարկն ընդունվել է:	
11	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:08:20	Կարգի 20-րդ, 21-րդ, 22-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Հաշմանդամություն ունեցող անձին (երեխային) անձնական օգնականի ծառայությունը տրամադրվում է ծառայությունների անհատական ծրագրով սահմանված լինելու դեպքում, որը ներառում է անձնական օգնականի հաշմանդամություն ունեցող անձի կարիքների մանրամասն շարադրանքը: Այն դեպքում, եթե ծառայությունների անհատական ծրագիրը ներառում է նշում որակավորված անձնական	Առաջարկը չի ընդունվել: Հետագա քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է այլ բովանդակությամբ:	

		օգնականի անհարեժեշտության վերաբերյալ, ապա նրան տրամադրվում է որակավորված անձնական օգնական»		
12	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:07:56	Կարգի 19-րդ կետը հանել, քանի որ հարցը ենթակա չէ կարգավորման այս Կարգով:	Առաջարկն ընդունվել է մասնակի: Կետը խմբագրվել է:	
13	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:07:41	Կարգի 18-րդ կետով սահմանել, որ հաշմանդամություն ունեցող անձի անձնական օգնականը, ով տվյալ պահին ուղեկցում է հաշմնանդամություն ունեցող անձին ազատվում է կրթական, մշակութային, սպորտային, ժամանցային այլ վայրեր մուտքի վճարից: Ըստ անհրաժեշտության համապատասխան լրացումներ կատարել իրավական այլ ակտերում:	Առաջարկը չի ընդունվել:	
14	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:06:59	Կարգի 18-րդ կետի երկրորդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «ուղեկցում է հաշմանդամություն ունեցող անձին որևէ վայր այցելության ժամանակ (կրթական, մշակութային, սպորտային միջոցառումների, խմբակների մասնակցելու, աշխատանքի վայր այցելելու, պետական,	Առաջարկը չի ընդունվել: «և այլն» արտահայտությունը թվարկված մարմինների ցանկը սպառիչ չի դարձնում:	

		համայնքային, դատական մարմիններ և այլն),»		
15	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:06:33	Կարգի 15-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Անձնական օգնականի ծառայությունը ներառում է. հաշմանդամություն ունեցող անձի խնամքը, և (կամ) աջակցությունը հաշմանդամություն ունեցող անձին՝ հաղթահարելու միջավայրային արգելքները (այդ թվում՝ տեղաշարժվելու և հաղորդակցվելու) աջակցություն հաշմանդամություն ունեցող անձին կայացնել իր վերաբերյալ որոշումներ:	Առաջարկը չի ընդունվել:	
16	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:06:16	Կարգի 14-րդ կետի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «4) ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում սույն Կագրի 14-րդ կետի երկրորդ ենթակետով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ»	Առաջարկը չի ընդունվել, քանի որ դրույթների անհարկի կրկնություն է:	
17	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:04:19	Կարգի 14-րդ կետի երկրորդ ենթակը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «ով դատապարտվել է կամ մեղադրվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 18-րդ գլխով, 143-148-րդ հոդվածներով և 20-րդ գլխով նախատեսված հանցագործությունների համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված	Առաջարկը չի ընդունվել: Նախագծով առաջարկվող կարգավորումները բավարար են:	

		լինելու հանգամանքից, ինչպես նաեւ ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական հանցագործություն կարատելու համար»		
18	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:03:57	Կարգի 13-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Ցանկացած անձ, ով բավարարում է սույն Կարգի 12-րդ կետով, ինչպես նաև անկախ կյանքի կենտրոնների կողմից մասնագիտական եւ կարողությունների վերաբերյալ սահմանված լրացուցիչ պահանջներին, կարող է դիմել այդ կենտրոններին՝ անձնական օգնականի որակավորում ստանալու համար:»	Առաջարկը չի ընդունվել: Նախագծում խմբագրվել են որակավորմանն առնչվող դրույթները: հաշվի առնելով ԿԳՄՍՆ առաջարկներն այն հիմնավորմամբ, որ որակավորումը հիմնական կրթական ծրագրերով ուսումնառության ավարտին ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ է:	
19	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 20:02:34	Կարգի 12-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ «Անձնական օգնական կարող է լինել ցանկացած չափահաս անձ, ով ունի անձնական օգնականի ծառայություն տրամադրելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի: 15 տարին լրացած անձը կարող է տրամադրել անձնական օգնականի ծառայություններ իր ծնողներին, քրոջը, եղբորը, տատին, պապին,	Առաջարկը չի ընդունվել: Այդ հանգամանքները կարող են հաշվի առնվել անձնական օգնականի ծառայություն տրամադրելու իրավունքը հավաստող վկայական տրամադրելու գործընթացում, որտեղ սահմանված կլինեն համապատասխան չափանիշներ:	

		եթե դա չի խաթարի նրա կրթություն ստանալու եւ հանգստի իրավունքները:		
20	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 19:50:28	Կարգի 9-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Անձնական օգնականը պարտավոր է պահմանել անձի եւ նրա հետ փոխկապակցված անձի անձնական եւ ընտանեկան կյանքին առնչվող տվյալների գաղտնիությունը: Անձնական օգնականի ծառայությունն իրականացնելիս անձի եւ նրա հետ փոխկապակցված անձանց անձնական տվյալները ենթակա են պաշտպանության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին համապատասխան: »	Առաջարկը չի ընդունվել: Հղում է տրված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին, որը սպառիչ կարգավորում է անձնական տվյալներին առնչվող բոլոր հարաբերությունները:	
21	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 19:50:02	Կարգի 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ «Անձնական օգնականի ծառայությունն իրականացնելիս երաշխավորվում է հաշմանդամություն ունեցող անձի մասնակցությունը իր վերաբերյալ ցանկացած որոշման կայացմանը: Եթե հաշմանդամություն ունեցող անձը ունի օրինական ներկայացուցիչ, նրա որոշումները քննարկվում են օրինական ներկայացուցչի հետ: Անձի կամքը եւ նախընտրությունները բացահայտելու անհնարինության դեպքում, ընտրությունը կատարում է անձի օրինական ներկայացուցիչը՝ հաշվի առնվելով անձի կամքի եւ նախընտրությունների լավագույն	Առաջարկը չի ընդունվել: Առաջարկի մի մասը կարգավորված է կարգի 7-րդ կետով, մի մասը նորմ պարունակող դրույթ չէ:	

		մեկնաբանությունը: Հաշմանդամություն ունեցող երեխաների փոխարեն որոշումները կայացնում է նրանց օրինական ներկայացուցիչը: Օրինական ներկայացուցիչը լսում եւ քննարկում է որոշումը երեխայի հետ եւ հաշմանդամություն ունեցող երեխայի կարծիքը հաշվի է առնում հիմք ընդունելով նրա տարիքը եւ հասունությունը:»		
22	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 19:47:48	Կարգի 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Անձնական օգնականի ծառայության, այդ թվում՝ անձնական օգնականի ընտրությունը կատարում է օգնականից օգտվող չափահաս հաշմանդամություն ունեցող անձը, ներառյալ այն դեպքում երբ անձը ունի օրինական ներկայացուցիչ: Անձի կամքը եւ նախընտրությունները բացահայտելու անհնարինության դեպքում, ընտրությունը կատարում է անձի օրինական ներկայացուցիչը՝ հաշվի առնվելով անձի կամքի եւ ցանկությունների լավագույն մեկնաբանությունը:»	Առաջարկը չի ընդունվել: Առաջարկի մի մասը կարգավորված է կարգի 7-րդ կետով, մի մասը նորմ պարունակող դրույթ չէ:	
23	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա	Կարգի 6 -րդ կետի երրորդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «հաշմանդամություն ունեցող անձանց	Առաջարկը չի ընդունվել:	

	10.03.2022 19:47:11	ինքնավարության, որոշումների նկատմամբ հարգանքը և իրազեկ համաձայնությունը,»		
24	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 19:47:02	Նախագծով կարգավորված չեն այն չափանիշները կամ գործիքները, որոնցով ստուգվելու է, թե արդյո՞ք անձնական օգնականի թեկնածուն ունի անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Առաջարկում ենք սահմանել:	Առաջարկը չի ընդունվել: Անձնական օգնականի ծառայություն կարող է տրամադրել այն անձը, ով ունի անձնական օգնականի ծառայություն տրամադրելու իրավունքը հավաստող վկայական: Թերևս, սա ենթադրում է, որ նա անցել է համապատասխան վերապատրաստում, հաղթահարել թեստավորման փուլը և ստացել համապատասխան վկայական:	
25	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 19:46:51	Նախագծով սահմանված չէ անձնական օգնականի վճարի չափը կամ դրա որոշման կարգը, ինչպես նաև այն գործոնները, ծառայության ծավալը, որոնց հիման վրա որոշվելու է անձնական օգնականի վարձատրության չափը: Առաջարկում ենք Նախագծով նախատեսել, որ անձնական օգնականի վարձրատրության չափը որոշվում է հաշվի առնելով օգնականի կողմից իրականացվող գործողությունների տեսակը, բնութը եւ ծավալը:	Առաջարկը չի ընդունվել: Հետագա քննարկումների ժամանակ նախագիծը այս համատեքստում լրամշակվել է: Անձնական օգնականի վարձատրությունը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով:	

26	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 19:44:22	Կարգի 2-րդ կետի երրորդ ենթակետի՝ «անկախ կյանքի կենտրոն»-ի սահմանումը վերաշարադրել հետեւյալ խմբագրությամբ. «անկախ կյանքի կենտրոն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպություն, որը հաշմանդամություն ունեցող անձանց մատուցում է նրանց կարիքների գնահատման, անկախ կյանքի հմտությունների ձևավորման, անձնական օգնականի, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման, հոգեբանական և նշված ծառայությունների հետ փոխկապակցված այլ ծառայություններ.»	Առաջարկը չի ընդունվել: Ներկայումս քննարկվում է անկախ կյանքի կենտրոնի կազմակերպաիրավական կարգավիճակը:	
27	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 10.03.2022 19:43:45	1. Առաջարկում ենք Կարգի 2-րդ կետի առաջին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Որակավորված անձնական օգնականն է նաև այն անձը, որը տիրապետում է բավարար հաղորդակցական հմտությունների և աջակցում է անձին կայացնել որոշումներ՝ ֆինանսների և գույքի տնօրինման, գործարքների կնքման, իրավական բնույթի, առողջության, բնակության վայրի ընտրության և այլ հարցերի շուրջ: Որակավորված անձնական օգնականի ծառայությունները չեն կարող փոխարինել մասնագիտական ծառայությունների:	Առաջարկը չի ընդունվել: Առաջարկը սույն նախագծի կարգավորման առարկա չէ:	

30	Դպրոցական Ծնողխորհուրդների Անդամների Ազգային Ասոցիացիա ՀԿ 10.03.2022 13:47:28	ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ բաժնի, «Անձնական օգնականի ծառայության հիմնական սկզբունքներն են» կետի հետևյալ արտահայտությունն ունի պարզաբանման կարիք՝ «հաշմանդամություն ունեցող անձանց որոշումների նկատմամբ հարգանքը և իրազեկ համաձայնությունը»: Կարծում ենք պետք է պարզաբանել, թե ի՞նչ է նշանակում իրազեկ համաձայնություն:	Առաջարկը չի ընդունվել: «Իրազեկ համաձայնություն» եզրը կիրառվում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային բազմաթիվ փաստաթղթերում (անգ.՝ informed consent), պարզ է, հստակ, ուստի առանձին սահմանելու անհրաժեշտություն չկա: Ընդհանուր առմամբ, իրազեկ համաձայնությունը անձի կողմից տրված համաձայնությունն է, որը հիմնված է անձին հասկանալի լեզվով տրամադրված ամբողջական, օբյեկտիվ և մատչելի տեղեկատվության վրա:	
31	Դպրոցական Ծնողխորհուրդների Անդամների Ազգային Ասոցիացիա ՀԿ 10.03.2022 13:47:28	ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ բաժնի, «Անձնական օգնականի ծառայության հիմնական սկզբունքներն են» կետի հետևյալ արտահայտությունը պարզաբանման կարիք ունի՝ «հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների»: Միտքը կամ լրիվ չէ, կամ քերականորեն ճիշտ չի ձևակերպված:	Առաջարկն ընդունվել է: Խմբագրվել է:	
32	Կարինե Գրիգորյան	Նախագիծը չի անդրադառնում անձնական օգնականի կողմից հաշմանդամություն	Առաջարկը չի ընդունվել: Առաջարկը սույն նախագծի	

	09.03.2022 23:58:15	ունեցող անձի հանդեպ չարաշահման, բռնության, ներառյալ սեռական բռնության դեպքերի հավանակությանը:	կարգավորման առարկա չէ: Հարցը ՀՀ օրենսդրությամբ կարգավորված է:	
33	Կարինե Գրիգորյան 09.03.2022 23:58:15	Ընդհանուր դրույթներ «Անձնական օգնականի ծառայությունն իրականացվում է պետության կողմից ֆինանսավորմամբ, համաֆինանսավորմամբ, հաշմանդամություն ունեցող անձի (օրինական ներկայացուցչի) միջոցների հաշվին կամ կողմերի համաձայնության դեպքում՝ անվճար հիմունքներով»: Հստակեցնել, թե որ դեպքերում պետք է հաշմանդամություն ունեցող անձը սեփական միջոցներից վճարի որակավորված անձնական օգնականի ծառայությունից օգտվելու համար:	Հետագա քննարկումների արդյունքում կետը հանվել է: Նախագիծը լրամշակվել է այն տրամաբանությամբ, որ վճարումը կատարվում է պետական բյուջեի կամ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:	
34	Կարինե Գրիգորյան 09.03.2022 23:58:15	Պայմանագրի ձև 2.2.7 «չսահմանափակել և չխոչընդոտել հաշմանդամություն ունեցող անձին՝ իրականացնելու օրենքով նախատեսված իր իրավունքները՝ բացառությամբ վերջինիս կյանքին անմիջական վտանգ սպառնալու դեպքերի»: Անհրաժեշտ է հստակ շարադրել այդ դեպքերը, այլապես որոշումները կայացումը, չի կարող զերծ լինել կարծրատիպային մտածելակերպից և սխալ ենթադրություններից:	Առաջարկը չի ընդունվել: Կյանքին անմիջական վտանգ սպառնալու դեպքերը հեշտ նույնականացվող են, անհետաձգելի են, ենթակա են հստակ գնահատման, և չեն տալիս լայն մեկնաբանման հնարավորություն: Դրանք, մասնավորապես, այն դեպքերն են, որոնց ժամանակ վտանգվում է անձի կյանքը, օրինակ, կարող են մահվան պատճառ դառնալ, պահանջում են արագ	

			միջամտություն, բժշկական օգնություն և հնարավոր հոսպիտալացում:	
35	Կարինե Գրիգորյան 09.03.2022 23:58:15	Անձնական օգնականի ծառայության պարտականությունների ցանկին ավելացնել «աջակցել հաշմանդամություն ունեցող անձին աշխատանքի տեղավորման, ինքնարժեքի զարգացման կամ ինքնազորեղացման, խորհրդատվության, սոցիալական և վերականգնողական ծառայություններ ստանալու հարցում:	Առաջարկը չի ընդունվել: Անձնական օգնականի ծառայության շրջանակը հստակ սահմանված է կարգի 15-րդ , 16-րդ և 17-րդ կետերում:	
36	Կարինե Գրիգորյան 09.03.2022 23:58:15	Ընդհանուր դրույթներ բաժնի անկախ կյանքի կենտրոն հասկացության մեջ ավելացնել «կազմակերպություն՝ որը ստեղծված է և ղեկավարվում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից»:	Առաջարկը չի ընդունվել: Ներկայումս քննարկվում է անկախ կյանքի կենտրոնի կազմակերպահրավական կարգավիճակը:	
37	<<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ 09.03.2022 23:50:20	3. Առաջարկում ենք Նախագծով սահմանել պարտավորություն՝ ապահովել սույն Նախագծով առաջարկվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև բոլոր ընթացակարգերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:	Առաջարկը չի ընդունվել: Առաջարկը սույն նախագծի կարգավորման առարկա չէ: Ներկայումս շրջանառվում են այլ իրավական ակտեր, որոնց նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց համար տարբեր ոլորտներում մատչելիության ապահովումն է, մասնավորապես, «Խելամիտ հարմարեցումներ	

			ապահովելու կարգը սահմանելու մասին» և «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող մատչելիության պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:	
38	<<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ 09.03.2022 23:50:20	2. Անձնական օգնականի պարտավորություններում նշվում է, որ դերը համատեղությամբ ստանձնելու ցանկության դեպքում օգնականը պետք է հաշմանդամություն ունեցող անձից համաձայնություն ստանա: Հստակ չէ գրավոր, թե բանավոր համաձայնության մասին է խոսքը, ինչն առաջարկում ենք հստակեցնել:	Այլ առաջարկի հիման վրա կետը հանվել է:	
39	<<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ 09.03.2022 23:50:20	1. Առաջարկում ենք հստակեցնել Նախագծի համարակալումը և համապատասխանեցնել Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքին:	Նախագծի համարակալումը համապատասխանում է «Նորմատիվ իրվական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Խնդիրն առաջանում է e_draft կայքէջում տեղադրելու ժամանակ:	
40	Արմեն Ալավերդյան 09.03.2022 12:23:45	Նախագծի մշակումը ողջունելի է և խիստ կարևոր: Միևնույն ժամանակ, նախագծում կան որոշ հակասություններ և խնդիրներ: Նշեմ միայն մի քանիսը: 1) Սահմանափակվում	Նախարարություն ուղարկված տարբերակը կքննարկվի և դիտարկումները աշխատանքային կարգով կուղարկվի:	

		է հաշմանդամություն ունեցող անձի՝ անհատական օգնականի ընտրելու իրավունքը, 2) հակասական են անձնական օգնականի ֆինանսավորման աղբյուրների մասին դրույթները: Միանշանակ անձնական օգնականի ծառայությունները պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեի կողմից 3) նշվում է, որ հաշմանդամություն ունեցող անձը պետք է մասնակցի որոշումներ կայացնելու գործընթացին: Իրականում, հաշմանդամություն ունեցող անձը պետք է ինքնուրույն որոշումներ կայացնի: Ներկայումս Անկախ կյանքի եվրոպական ցանցի իմ գործընկերների օգնությամբ պատրաստում եմ առաջարկությունների փաթեթ, որը պատշաճ ձևով կներկայացնեմ նախարարությանը:		
41	Վահան Սարգսյան 08.03.2022 01:28:49	«EREO» անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի շահերի պաշտպանության համակարգող 1 Անձնական օգնականի պարտականություններից հանել հետևյալ պարբերությունը: Այլ անձանց անձնական օգնականի դերը համատեղությամբ ստանձնելու ցանկության դեպքում ստանալ հաշմանդամություն ունեցող անձի համաձայնությունը: Հիմնավորում՝ քանի որ մեր երկրում ռեսուրսները սահմանափակ են և դժվար թե մեկ	Առաջարկն ընդունվել է:	

		հաշմանդամություն ունեցող անձի համար մեկ անձնական օգնական տրամադրվի: Եվ հետո՝ անձնական օգնականը կարող է ունենալ հավելյալ ժամանակ և ներուժ մեկ այլ շահառուի ևս ծառայություն մատուցելու: Բացի այդ՝ սա կարող է լինել շահառուի անհիմն կամայականություն և չբխել անհրաժեշտությունից: 2 Քանի որ «Անձնական օգնականի մասին» նախագծի մեջ հստակեցված չեն մատուցվող ծառայությունների տեսակները՝ առաջարկում ենք տարբերակել անձնական օգնականի ծառայությունների երեք հիմնական տեսակ" ա) անձնական խնամք՝ հագուստը հանել և հագցնել, կերակրել, բնական կարիքներ, անձնական հիգիենա և այլն. բ) ներտնային սպասարկում՝ տարածքի մաքրում, լվացք, սննդի պատրաստում, կարդալ տեղեկատվական բնույթի կարճ տեքստեր և կատարել գրառումներ , գնումներ և այլն: գ) տնից դուրս (արտատնային) սպասարկում՝ ուղեկցում (աշխատավայր, դպրոց, մարզամշակութային և ժամանցի կենտրոններ, բանկ, սոցիալական ծառայություններ մատուցող հաստատություններ, զբոսանք և այլն): 3 Անձնական օգնականը, հաշմանդամություն ունեցող անձի ցանկությամբ, կարող է		

		մատուցել նշված երեք տեսակի ծառայությունները, կամ՝ դրանցից երկուսը, և կամ ՝ մեկը: Անձնական օգնականի վարձատրության չափը պետք է կախված լինի մատուցվող ծառայությունների տեսակից և քանակից: 4 Նկատի ունենալով անձնական օգնականի արձակուրդի իրավունքը և կարճաժամկետ ծառայությունների անհրաժեշտությունը՝ սահմանել նաև ժամանակավոր անձնական օգնականի ծառայության տեսակ : Հիմնավորում՝ հաշմանդամություն ունեցող անձին կարող է անձնական օգնականի ծառայությունը անհրաժեշտ լինել որոշակի ժամկետով, օրինակ՝ միայն ձմռանը ՝ տնից դուրս գալու համար, կամ մեկ ամսով՝ որևէ դասընթացի մասնակցելու համար:		
42	"Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ" հաշմանդամություն ունեցող անձանց ՀԿ 07.03.2022 22:51:08	Նախագծում նշվում է, որ պայմանագիրը կարող է կնքվել ծառայությունը մատուցող անձնական օգնականի և հաշմանդամություն ունեցող անձի (նրա օրինական ներկայացուցչի) միջև: Սակայն սա ռիսկային է և բողոքների դեպքում և մշտադիտարկում կատարելու տեսանկյունից: Առաջարկում ենք երկկողմ պայմանագիր կազմելու հնարավորությունը հանել նախագծից և թողնել պայմանագրի եռակողմ կնքման	Առաջարկն ընդունվել է: Նախագծով նախատեսվել է եռակողմ պայմանագիր կնքելու պահանջ՝ անձնական օգնական, անձի և անկախ կյանքի կենտրոնի միջև:	

		տարբերակը (ներառելով նաև անձնական օգնականի և (կամ) նրան ուղղակիորեն առնչվող (այդ թվում՝ անձնական օգնականի ծառայության մշտադիտարկումն ու գնահատումը, անձնական օգնականների վերապատրաստման հարցում աջակցությունը) ծառայություններ մատուցող պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին՝ այդ թվում որակավորված անձնական օգնականին առաջարկած անկախ կյանքի կենտրոններին): Նման կերպ վերահսկողությունը և կողմերի զգոնությունը առավել բարձր կլինի:		
43	"Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ" հաշմանդամություն ունեցող անձանց ՀԿ 07.03.2022 22:42:19	Ծառայությունների անհատական ծրագրով՝ անձնական օգնականի ծառայության համար նախատեսված գումարը վճարվում է հաշմանդամություն ունեցող անձին (նրա օրինական ներկայացուցչին)-սրա հետ կապված վճարման մեխանիզմը հստակ չէ, այն ինչպե՞ս է տրամադրվելու անձնական օգնականի կարիք ունեցող անձին իսկ արդեն վերջինս ինչպե՞ս է վճարելու անձնական օգնականին:	Առաջարկն ընդունվել է: Նախագիծը լրամշակվել է: Անձնական օգնականը կվճարվի Անկախ կյանքի կենտրոնի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:	
44	Վահագն Միսոյան 25.02.2022 21:45:35	1. «Անձնական օգնական չի կարող լինել այն անձը» կետում թվարկված սահմանափակումները բավարար չեն:	Առաջարկն ընդունվել է, նախագծով սահմանված կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետը	

		Առաջարկում եմ դրանցում ավելացնել նաև հետևյալները. * Եթե անձը նախկինում եղել անձնական օգնական ու դատապարտվել է իր խնամարկյալի նկատմամբ կատարած հանցագործության համար՝ անկախ դատվածության մարված լինել-չլինելուց: * Եթե անձը նախկինում դատապարտվել է միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար 2-3 և ավելի անգամ: 2. Այնքան էլ հասկանալի չի, թե ինչպես է անձնական օգնականը «բացառելու հաշմանդամություն ունեցող անձանց մեկուսացումը համայնքից»: Արդյո՞ք անձնական օգնականը պարտավոր է լինելու զբաղվել նաև համայնքում բացատրական աշխատանքներով: 3. Նախագծում սահմանված են «Անձնական օգնականի ծառայության նպատակները և սկզբունքները», ու անձնական օգնականի պարտականությունները, սակայն հստակ չի, թե ի՞նչ միջոցներ կարող են ձեռնարկվել, եթե անձնական օգնականը խախտի թվարկված սկզբունքները կամ չկատարի իր պարտականությունները: 4. Ինչպե՞ս է վերահսկվելու անկախ կյանքի կենտրոնների աշխատանքը, ինչպե՞ս են ապահովվելու միասնական ստանդարտները: Արդյո՞ք դրանք արդեն իսկ կարգավորվում են այլ իրավական	խմբագրվել է առաջարկին համապատասխան:	

		ակտերով: 5. Արդյո՞ք գոյություն է ունենալու որակավորված անձնական օգնականների միասնական բազա, թե՞ ամեն անկախ կյանքի կենտրոնն իրենն է ունենալու: Եթե լինելու է միասնական բազա, արդյո՞ք այն բաց է լինելու:		
45	Հրանուշ Եղիշյան 25.02.2022 19:50:10	Ես որպես հաշմանդամություն ունեցող երեխայի մայր գտնում եմ որ սա հրաշալի նախագիծ ա, քանի որ մենք՝ ծնողներս աշխատելու հնարավորությունից զրկված ենք լինում հաշմանդամ երեխա ունենալու և նրանց այլ անձի խնամքին թողնելու հնարավորության բացակայության պատճառով: Եվ նախագծով հնարավորություն կտրվի թե ծնողին աշխատել, թե երեխային ունենալ բազմամյա զբաղվածություն և թե հատուկ ներառական ֆակուլտետը ավարտած մասնագետին աշխատելու իր մասնագիտությամբ: Անհամբեր սպասում եմ ծրագրի իրականացմանը:	Շնորհակալություն դիտարկման համար:	
46	Լիլիթ Սիմոնյան 24.02.2022 21:21:21	անձնական օգնականի ծառայությունները զգալիորեն կօժանդակեն աշխատող ծնողներին և ավելի արդյունավե կդարձնեն երեխաների սոց"ներառումը:	Շնորհակալություն դիտարկման համար:	